



# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

## ՍՐԲՈՅ ՕՐՀՆԵԱԼ ՊԱՏԱՐԱԳԻ

Ըստ Աւանդութեան Սբյ Եկե-
ղեցւոյս Հայաստանեայց ։

Տպագրեցեալ՝ ի Քրիստոսահիմն և ՚ի
Լուսանկար Աթոռոջ Սբյ
ԷՋՄԻԱԾՆԻ։

Հրամանաւ Տն Ղուկաս
Վեհափառ Կաթուղիկոսի ամ
Հայոց ։

Յամի մարդեղութեան Փրկչին, ռչձը ։
Եւ Թուականիս Հայոց, ռմլէ ։





# ՕՐՀՆՔ ԱՐՀԱՆԳԵԼՈՑ

ապա եկեղեցւոյ. Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել:

## ՊԱՐՏԻ ԱՅՍՊԷՍ

խորհրդաբար զգեստաւորիլ:

Մտցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագօքն՝ ուր զգեստքն են պատրաստ:
Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի,
Ասասցեն ապա Սաղմոս՝ ՃԼԱ, Կցորդ:

ՔԱՀԱՆԱՅՔ քո զգեցցին զարդարութի. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն: փոխ.

Յիշեա տր զդաւիթ. եւ զամ հեզութի նորա:

Որպէս երդուաւ տն. եւ ուխտս եդ այ յակոբայ:

Թէ ոչ մտից ՚ի յարկս տան իմոյ. թէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտեւանաց իմոց. կամ հանգիստ կրանաց իմոց. մինչեւ գտից զտեղի յարկի տն այ յակոբայ:

Ահա լուաք զնմանէ յեփրաթայ. եւ գտաք զնա ՚ի դաշտս մայրեաց:

Մտցուք ՚ի յարկս նր. եւ երկիրպագցուք ՚ի տեղւոջ՝ ուր կացեալ են ոտք նր:

Արի՛ տր ՚ի հանգիստ քո՝ դու եւ տապանակ կտակի սրբութեան քո:

Քահանայք քո զգեցցին զարդարութի. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վասն դաւթի ծառայի քո՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ:

Երդուաւ տր դաւթի ճշմարտութբ՝ եւ ոչ ստեաց նմա. ՚ի պտղոյ որովայնի նր նստուցանել յաթոռ նր:

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, եւ զվկայութիս իմ, զոր ուսուցից նոցա:

Որդիք նց նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո:

Հաճեցաւ տէր ընդ սիոն. եւ ընտրեաց բնակել ՚ի նմա.

ասէ՝ այսէ հանգիստ իմ յաւի֊
տեանս յաւիտենից ․ ՚ի սմա
բնակեցայց՝ զի հաճեցայ
ընդ սա ։
Որս սորա , օրհնելով օրհ֊
նեցից ․ և զաղքատս սորա
լցուցից հացիւ ։
Քահանայս սորա զգեցուցից
զփրկութի ․ և սրբք սորա ցնծա֊
լով ցնծասցեն ։
Անդ ծագեցից եղջիւր ՚ի դա֊
ւիթ ․ պատրաստ արարից ըղ
ճրագ օծելոյ իմոյ ։
Թշնամեաց սորա զգեցուցից

զամօթ ․ այլ ՚ի վր նր ծաղկես֊
ցի սրբութի իմ ։
Փառք Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ ։
Այժմ և միշտ և յաւիտեան" ։
Ապ՟ քարոզեսցէ Սարկաւագն ։
Եւևս խաղաղութեան զտր
աղաչեսցուք ։
Խնդրեսցուք հաւատով միա֊
բանութբ ՚ի տէ ․ զի զողորմութե
զշնորհս իւր արասցէ ՚ի վր մեր ։
Ամենակալ տր մծ մեր կե֊
ցուսցէ և ողորմեսցի ։
Ապ՟ ասասցեն երկոտասան Տր ողոր֊
մեայս ։




Քրիստոս գառն անմեղ՝ սիրովն որ առ մեզ, գայ ՚ի մահ խաչի.
Հօրն իւր հնազանդեալ՝ առ հաշտել ը̄ մեզ, պատարագ մատչի։

Աղօթք առանձնական՝ Պա-
տարագիչ Քահանայ-
ին, յառաջ քան ըզ-
զգեստաւորիլն ։

ՈՐ ԶԳԵՑԵԱԼ
ԵՍ ԶԼ.ՈՅՍ ՈՐՊԷՍ ՀԱՆԴԵՐՁ
ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ․

անճառելի խոնարհութբ̃ յերկիր երևեցար և ընդ մարդկան շրջեցար ։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի՝ և զարդարեցեր զեկեղեցի քո սր̃բ ։ Տէ՛ր ամենակալ՝ որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ, արժանի արա՛ և զիս ՚ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո ․ որ համարձակիմ և մերձենամ ՚ի նոյն հոգևոր

Ե

պաշ

պաշտօն փառաց քոց ։ Որպս
զի զմր ամբարշտութի մերկա-
ցուցեալ՝ որ է՛ հանդերձ պղծութե․
և զարդարեցայց լուսով քով։
Ընկեա՛լ յինէն զչարիս իմ, և
թօթափեա՛լ զյանցանս իմ․
որպէս զի արժանի եղէց հան-
դերձեալ լուսոյդ առ ՚ի քէն։
Շնորհեա՛ ինձ քահանայա-
կան փառօք մտանել ՚ի պաշ-
տօն սրբութեց քոց, ըն այնոսիկ
որք անմեղութբ պահեցին
զպատուիրանս քո։ Ո՛վ և ես
պատրաստ գտայց երկնաւոր
առագաստին ընդ իմաստուն
կուսանսն․ փառաւորել ըզ-
քեզ Քս՝ որ բարձեր զմեղս ա-
մենեցուն։ Ո՛վ դու ես սր-
բութիւն անձանց մերոց․ և
քեզ բարեբարիդ այ վայելէ
փառք՝ իշխանութի և պատիւ,
այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից․ ամէն։

Եւ մատուցեալ Սարկաւագունքն
զգեցուսցեն նմա զհանդերձսն՝ առե-
լով, Եւ ես խաղաղութե զՏր աղաչես-
ցուք․ ընկալ, կեցո և"։
Վերջին, Օրհնութի և փառք հօր և"։

Եւ յետ օրհնութեան՝ դնել յառաջ
զԽոյրն ՚ի գլուխն,
և ասասցէ։

ԴԻՐ ՏԷՐ
սաղաւարտ փրկ-
կութե ՚ի գլուխ
իմ, պատերազմիլ ըն զօրութիւնս
թշնամւոյն․ Շնորհօք տն մե-
րոյ Յի Քի։ որում վայելէ"։

Շապիկն։

Զգեցո՛ տէր ինձ հանդերձ
փրկութե և պատմուճան ուրա-
խութե․ և շուրջ պատեա՛ զզգես-
տուն փրկութե․ Շնորհօք։

Գօտւոյն։

Շուրջ պատեսցէ՛ կամար հա-
ւատոյ զմէջս սրտի իմոյ և
մտացս․ և շիջուսցէ՛ ՚ի սմանէ
զխորհուրդս աղտեղիս։ Եւ
զօրութի շնորհաց քոց յմժամ
բնակեսցէ՛ ՚ի սմա․ Շնոր"։

Բազպանին։

Տո՛ւր տր զօրութի ձեռին իմոյ,
և լուա՛ զմր աղտեղութի իմ։
Որպ զի կարող լինիցիմ սպասա-
ւորել քեզ անախտութեամբ
հոգւոյ և մարմնոյ․ Շնոր"։

Ուրարին․ և Վակասին։

Զգեցո՛ տէր պարանոցի իմոյ

 զար

զարդարութ՟ի : Եւ՛ սրբեա՛ զխիղճ իմ յա՟մ աղտեղութ՟է մեղաց. Շնորհօք :

Նախորդին. այսինքն՝ Շուրջառին :

Տ՟ր՝ ողորմութ՟բ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ. և պարսպեա՛ ընդդէմ ներգործութեան չարին : Զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ. Շնոր'' :

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուքն՝ ասէ :

Ընծայեսցէ՛ անձն իմ ՚ի Տ՟ր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան. իբրև փեսայի եդ ինձ պսակ. և որպ՟ զհարսն զարդու զարդարեաց զիս. Շնորհօք Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի : ո'' :

Եւ՛ յետոյ եկեսցեն առաջի սրբոյ սեղանոյն : Եւ՛ քահանայն լուասցէ ըզ ձեռս իւր՝ ասելով Սղմ՟ իե՟. կցորդ :

Լուացից սրբութ՟բ զձեռս իմ :

Սարկաւագն. փոխ :

Դատ արա՛ ինձ Տ՟ր. զի ես :

Քահանայն :

Մ՟ սրբուհւոյ Ա՟ծածնի :

Սարկաւագն :

Մ՟ զԱ՟ծածինն՝ և զամենայն :

Քահանայն :

Ընկա՛լ Տէր զաղաչանս մեր'' :

Խոստովանիմ առաջի Ա՟յ, և սրբուհւոյ Ա՟ծածնին, և առաջի ա՟մ սրբոց, և առաջի ձեր հարք և եղբարք, զա՟մ մեղս զոր գործեալ եմ : Քանզի մեղայ խորհրդով, բանիւ, և գործով, և ա՟մ մեղօք զոր գործեն մարդիկ : Մ՝եղայ, մեղայ : Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէ՛ք վ՟ս իմ յԱ՟յ զթողութ՟ի :

Պատասխանեսցեն որք մերձն են :

Ողորմեսցի՛ քեզ Ա՟ծ հզօրն՝ և թողութ՟ի շնորհեսցէ՛ ա՟մ յանցանաց. քոց, անցելոյն և այժմուս. և յառաջակայէն փրկեսցէ՛. և հաստատեսցէ՛ յա՟մ գործս բարիս : Եւ՛ հանգուսցէ՛ զքեզ ՚ի հանդերձեալ կեանսն. ամէն :

Պատասխանեսցէ և ինքն :

Ազատեսցէ՛ և զձեզ մարդասէրն Ա՟ծ, և թողցէ՛ զա՟մ յանցանս ձեր. տացէ՛ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ ըզ բարիս. ուղղեսցէ՛ և զառաջակայ կեանս ձեր շնորհօք Ս՟ր-

հոգւոյն, հզօրն և ողորմածն. և նմա փառք յաւիտեանս ամէն։

Դպիրքն.

Յիշեսջի՛ր զմեզ առաջի անմահ Գառին Այ։

Քահանայն.

Յիշեալ լիջի՛ք առաջի անմահ Գառին Այ։

Դպիրքն. ՁՆ, ԷԹ. փոխ.

Մշտակեցջի՛ք առ Տր Ամեր"։

Սարկաւագն քարոզեսցէ.

Ամ̃ եկեղեցեաւս աղաչես"։

Քահանայն.

Ի մէջ տաճարիս և առաջի Ածընկալ և պայծառացեալ սբ նշանացս և սբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. զսբ և զհրաշալի և զյաղթօղ զտէրութիւնդ քո փառաւորեմք, և քեզ մատուցանեմք զօրհնութի և զփառս ընդ Հօր և ընդ հոգւոյդ սբյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Քահանայն դարձեալ ասասցէ սաղմոս՝ ԽԲ, կցորդ. Նշանելով ՚ի խորանն։

Մտից առաջի սեղանոյ Այ։

Սարկաւագն, փոխ.

Դատ արա՛ ինձ Ած. և իրաւ։

Սարկաւագն քարոզեսցէ.

Նա՛և խաղաղութեան զՏր աղաչեսցուք։

Օրհնեսցո՛ւք զՀայր Տն մերոյ Յի Քի. որ արժանի արար զմեզ կալ ՚ի տեղւոջս փառաբանութե, և երգել զերգս հոգևորս։ Ամենակալ Տր"։

Քահանայն.

Ի յարկի սրբութե և ՚ի տեղւոջ փառաբանութե՝ հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս, առաջի Ածընկալ և պայծառացեալ սբ նշանացս և սբ տեղւոյս՝ խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. զսբ և զհրաշալի և զյաղթօղ զտէրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ ը̃ երկնային զօրան մատուցանեմք զօրհնութի և զփառս ը̃ Հօր և ը̃ հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

իսկ թէ եպիսկոպոս լինիցի խորհրդա-
ծուն, ածցէ ՚ի վերայ լանջացն զպա-
տուական եմիփորոնն ։ Եւ մատուցեալ
առ ընծայարանն սեղանոյն, և ՚ի ծունկս
անկեալ, յորդահոս արտասուօք՝ լուռ և
անմռունչ աղաղակէ զաղօթս առ ամ
Հոգին անօրինիչ գործոյն ։

Աղ՝ Գրիգորի Նարեկացւոյ ։

# ԱՄԵՆԱԿԱԼ

բարերար և մարդասէր ած բոլորից․ յօրինող երևութից և աներևութից․ փրկող և հաստատող․ խնամող և խաղաղարար, հօր հզօր հոգի ։ Հայցեմք բազկատարած մաղթանօք, գոչմամբ հեծութեան՝ յանդիմանն եղեալ քեզ ահաւորիդ ։

Մատչիմք մեծաւ դողութբ, սաստիկ երկիւղիւ՝ մատուցանել նախ զբանական զայս պատարագ՝ քում անզննին տէրութեդ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի՝ հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ էմ-

Բ

մանուէլի՝ զքեզ առաջնի, փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի ։

Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութն միանական ածութեդ․ յորոց մի և դու ճանաչիս անհաս ։

Քեւ, և ՚ի ձեռն քոյ առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողքն աստուանակոչեալք, զանցեալսն և զըգալոցսն, զեղեալսն և զոչ գոյացեալսն, անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին ։

Հոգի ած քարոզեալ զքեզ մովսէսի, որ ՚ի գնալն քոյ ՚ի վերայ ջրոցն՝ անպարագրելի զօրութի, ահեղ շրջապատութբ տածողականաւ՝ թևապարփակ պաշտպանողէն՝ գթածիլել ՚ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհրդոյ ծանուցեր ։ Յոր կերպարան օրինակութե՝ նախ քան զկատարեալ զըլորդ մածուած վերջնում վարդապետութեդ, յօրինեցեր կա-

Թ

ող

րող տիրամայր զբովանդակ ընտ-
թիւնս ամենից ընտրելոց բոլո-
րից դասից ամ էից՝ յանէից :
Եւ ստեղծանին ՚ի նորոգութ
յարութե ամ եղեալքս առ ՚ի
քէն՝ յայնմ ժամանակի, որ է
օր վերջին՝ այսր կենցաղի, և
օր առաջին՝ երկրին կենդանեց :
Քեզ հնազանդեցաւ միութ
կամացն՝ որպէս հօրն խորհուրդ,
ազգակիցն քո՝ էակիցն հօր՝
անդրանիկն որդի · մերոյս
կերպիւ զքեզ աւետարանեաց
Ճշմարիտ ած՝ հաւասար և հա-
մագոյ հօր իւր հզօրի · և զառ
՚ի քեզ հայհոյութին՝ անքաւելի
քարոզեաց · և իբր զածա-
մարտից զ՚ի քէն հեստերոցն ըզ
չարաբանական բերանակար-
կեաց : Նա զիւրն շնորհեաց
արդարն և անարատն՝ զորդին
ամի · որ վասն մեղաց մերոց
մատնեցաւ, և յարեաւ վասն
զմեզ արդարացուցանելոյ :
Նմա փառք ՚ի ձեռն քոյ, և
քեզ բարեբանութի ընդ հօր
ամենակալի, յաւիտեանս յա-
ւիտենից · ամէն :

Դարձել կրկնեսցի ՚ի նոյն կարգ բա-
նի, մինչև վստահութին վերահայե-
ցողութե լուսոյ հրաշափառազգեալ
յայտնեսցի · աւետարանել վերստին
զկրկին խաղաղութի ·

ԱՂԱՉԵՄՔ ԵՒ աղերսեմք արտա-
սուալից հառաչ-
մամբ յամ անձնէ՝ զխառա-
ծորեալ արարչութիդ՝ աներծ
և անստեղծ անժամանակ հօ-
գւոյդ գթածի, որ բարե-
խօսդ ես վն մեր յանմռունչ
հեծութիս՝ առ ողորմածդ հայր :
Որ զմեզն պահես, և զմեղու-
ցեալս մաքրես՝ և տաճարս
կազմես կենդանի և կեցուցիչ
կամաց բարձրեալդ հօր :
Արդ՝ աղաչեմք զմեզ յամ ան-
մաքուր գործոց, որ ո՛չ է հաճոյ
քումդ բնակութե · և մի՛ շիջցին
առ ՚ի մէնջ լուսոյդ շնորհաց
փայլմունք ՚ի տեսականացս ա-
չաց խմաստից · վն զի զքեզ ու-
սաք միանալ ՚ի մեզ ՚ի ձեռն
աղօթից, և ընտիր վարուց
խնկելոց :

Եւ քանզի մինչ յերկրորդու-
թենէդ պատարագի, և միւսդ
ընդունի՝ հաճեալ ընդ մեզ
հաշտարար արեամբ անդրան-
կի իւրոյ. խնկ դու ընկալցիս
զմեր պաղատանս, և յարդա-
րեցես զմեզ օթեվանս պատ-
շականս տեառն պատրաստութե՝ ի
վայելչութիւն ճաշակման երկնաւոր
գառինդ, առանց պատժոց
դատապարտութե՝ ընդունիլ
զայս անմահացուցիչ մանա-
նայս կենաց նորոյ փրկութե:

Եւ հալեցի՛ ի հրոյս յայս-
մանէ գայթակղութիս մեր, որպէս
մարգարէին կենդանախառոյկ
կայծակամբն՝ ի ձեռն ունե-
լեացն մատուցման. զի յամի
քոյդ քաղցրեացի գթութի,
որպէս որդւոյն քո հօր քաղց-
րութի. որ զանառակ որդին
մերձեցոյց ի հայրենի ժա-
ռանգութին, և զպոռնիկն
յառաջեցոյց յերկնային ար-
քայութին՝ արդարոցն երանեան:
Այո՛, տէր այո՛, և ես մի եմ ի
նոցանէ. և զիս ընկա՛լ ընդ

նոցին իբր մարդասիրութեան
կարօտեալ մեծի, շնորհօք քո
ապրեալ, զարեամբ քո տա-
ցեալ:

Զի յայսմ ժամու յամենայն ժա-
նիցի քո ամենայնդ՝ է հօր փա-
ռաւորել հանապազօրեայ,
ի մի կամս և ի մի իշխանութի
գոյութեան:

Դ Ձայն:

Զի քո՛ է գթութի, և կարո-
ղութի, և մարդասիրութի,
զօրութի և փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Ապա յարուցեալ եկեսցէ առ ընծայա-
րան սեղանոյն: առ որ մատուցէ Ար-
խատարկաւագն զԱշխարհն: Զօրաւոր
Քահանայն դիցէ ի մաղզմայն. ասելով:

Յիշատակ տն մերոյ յի քի:

Եւ առեալ զգինին արկցէ խաչանիշ
ի սկիհն. ասելով:

Յաղագս յիշատակի փրկա-
գործ տնօրէնութե տն այ և
փրկչին մերոյ յի քի:

Եւ ասասցէ զԱղօթս Յովհաննու
Ոսկեբերանին, Ի ծածուկ:

Տէր ած մեր՝ որ զերկնաւոր
հացդ զտր մեր յս քս զկերա-
կուրդ տմ աշխարհի, առա-
քեցեր փրկիչ և կեցուցիչ և

Ծա բա

բարերար՝ օրհնել և գովել զՔեզ, ինքնին դու Տէր օրհնեալ և այժմ զառաջադրութիւն զայս ։ Որպէս զոտ յերկնային քո սեղանդ ։ Ողորմեա՛ որպէս բարերար և մարդասէր զմեղուցեալս, և վասն որոց մատուցանի ։ Եւ զՄեզ անդատապարտ պահեա ՚ի քահանայագործութիւն Սուրբ խորհրդոց քոց ։ Զի որ և փառաւորեալ է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացդ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սբյ, այժմ և միշտ և յաւի՛" ։

Եւ սքօղեսցէ . ասելով Սաղմոս ՂԲ ։

Տր թագաւորեաց ։ Հաստատեաց ։ Ամբարձան ։ Ի ձայնէ ։ Սքանչելի ։ Տանն քում ։

Եւ խնկարկեսցէ երիցս . ասելով ։

Հոգին Սբ եկեսցէ ՚ի քեզ . և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քո ։

Եւ արկցէ զխունկն . ասելով ։

Խունկ մատուցանեմ առաջի քո Քս՝ բուրումն հոգևորական ։ Որպէս ՚ի Տր՝ յերկնային և յիմանալի քո մատուցարանդ ՚ի հոտ անուշից ։ Ընդունեա՛ առ մեզ փոխարէն զշնորհս և զպարգևս Հոգւոյդ Սբյ ։ Եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սբյ . այ՛" ։

Եւ ապա խնկելով ՚ի մէջ եկեղեցւոյն իջցէ հանդերձ սարկաւագօքն, և դարձեալ ելցէ ՚ի վեր, և երիցս երկրպագեալ՝ համբուրեսցէ զսեղանն ։ Եւ Նախասարկաւագն կացցէ ՚ի մէջ եկեղեցւոյն, ձայնեսցէ ։

Օրհնեա՛ տէր ։

Եւ Քահանայն ասասցէ ՚ի ձայն ։

ՕՐՀՆԵԱԼ թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սբյ, այժմ և միշտ" ։

Եւ սկսանիցին Դպիրքն ժամամուտ ՃԸ պատճառի աւուրն ։ Եւ յաւարտելն՝ ձայնեսցէ Նախասարկաւագն ։

Եւ ևս խաղաղութեան զՏր աղաչեսցուք . ընկալ, կեցո և ո՛" ։

Օրհնեա՛ Տր ։

Եւ Քահանայն ասասցէ ՚ի Ձայն ։

Օրհնութիւն և փառք Հօր և՛"

Խաղաղութիւն ամենեցուն ։

Դպ՛" . Եւ ընդ հոգւոյդ քո՛" ։

Սրկ՛" . Աստուծոյ երկրպագ՛" ։

Դպ՛" . Առաջի քո տէր ։

Եւ Քահանայն ասասցէ ՚ի Ձայն։

Տէր Աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննելի է, և փառքդ անհասանելի. որոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ անբաւ։ Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում, նայեաց ՚ի ժողովուրդս քո՝ և ՚ի տաճարս այս սուրբ։ Եւ արա ընդ մեզ և ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւն քո և զգթութիւն։ Զի քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ, այ"։

Եւ սկսանելոյն ասա Դպիրքն Սաղմոս և շարական ըստ պատշաճին։ Եւ մինչ նոքա երգիցեն, Քահանայն ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ։

Տէր Աստուած մեր՝ կեցո́ զժողովուրդս քո. և օրհնեա́ զժառանգութիւնս քո։ զլրումն եկեղեցւոյ քո պահեա́։ Սրբեա́ զնոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա́ աստուածային զօրութեամբ քով. և մի́ թողուր զյուսացեալս ՚ի քեզ։ Զի քո́ է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւ"։

Խաղաղութիւն ամենեցուն։

Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել. և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգևել խոստացար։ Դու և այժմ զծառայից քոց զխնդրուածս առ ՚ի յօգուտն կատարեա. շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեանդ, և ՚ի հանդերձեալն զկեանս յաւիտենականս պարգևելով։ Զի բարերար և մարդասէր ես Աստուած. և քեզ վայելէ փառք՝ իշխ"։

Եւ ՚ի փառք տալն դպրաց, երկիրպագցեն առաջի բեմին ամենեքեան։ Եւ Քահանայն երկրպագելով սեղանոյն, ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ։

Տէր Աստուած մեր՝ որ կարգեցեր յերկինս զդասս և զզօրս հրեշտակաց և հրեշտակապետաց ՚ի սպասաւորութիւն փառաց քոց. արա́ այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց, և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քում բարերարութեանդ։

Ի Ձայն։

Զի քո՛ է կարողութիւն, և զօրութիւն, և փառք՝ յաւիտեանս. ամէն։

Եւ համբուրեսցեն զսեղանն։ և Սարկաւագունքն գոչեսցեն։

Պրոսխումէ։

Եւ Սարկաւագաց մի ոք բարձրացուսցէ զԱւետարանն ոք։
Եւ Դպիրքն ըստ խորհրդոյ աւուրն երգեսցեն զՃաշուերգութեանն։

Սբ ած, սբ և հզօր, սբ և անմահ. որ խաչեցար․ և այլն։

Եւ Քահանայն զոյգ սմին ասասցէ ՚ի ծածուկ։

Սբ՝ որ ՚ի սուրբս հանգուցեալ ես, և Երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ՝ և քերովբէք փառաւորեն. և ամ երկնային զօրութիք քեզ երկիրպագանեն։ Որ ՚ի չգոյէ ՚ի գոյ ածեր զամենայն արարածս։ Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում և նմանութե. և ամ շնորհիւ քով զնա զարդարեցեր. և ուսուցեր խնդրել զիմաստութի և զգօնութի։ Եւ ո՛չ անտես արարեր զմեղուցեալն. այլ եդեր ՚ի վերայ նորա ապաշխարութի փրկութե։ Որ արժանի արարեր զմեզ զխոնարհեալս և զանարժանս ծառայս քո ՚ի ժամու յայսմիկ, կալ առաջի փառաց սրբութե սեղանոյ քոյ, և զօրհնաւոր երկրպագութի և զփառաբանութի մատուցանել քեզ։ Դու տր՝ ընկա՛լ ՚ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիս. և պահեա՛ զմեզ քոյին քաղցրութեմբդ։ Թո՛ղ մեզ զամ յանցանս մեր զկամայ և զակամայ։ Սրբեա՛ զհոգի՝ ըզմիտս և զմարմինս մեր. և շնորհեա՛ ՚ի սրբութե պաշտել զքեզ զամ աւուրս կենաց մերոց։ Բարեխօսութբ սրբուհւոյ ածածնին և ամ սրբոց քոց՝ որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան։ Զի սբ ես տր ած մեր. և քեզ վայելէ փառք՝ իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ժդ Եւ

Եւ 'ի կատարել երեքսրբենոյն և ա-
ղօթիցն՝ Սարկաւագն քարոզեսցէ :

Եւ ևս խաղաղութեան զՏէր :

Ա ։ խաղաղութեան ամ աշ" :

Դպա ձայնեսցէ :

Օրհնեա՛ տէր :

Եւ Քհնայն՝ զկն քարոզելոյն, բազկա-
տարած ասասցէ զԱղօթս, 'ի ծածուկ :

Տէր Աստուած մեր՝ զբազկատա-
րած զաղաչանս ծա-
ռայից քոց վերընկալցիս, և
ողորմեսցիս ըստ մեծի ողորմութե
քում : Զգթութիւն քո առա-
քեա՛ 'ի վերայ մեր և ամ ժո-
ղովրդեանս՝ որք ակնունին առ
'ի քէն առատ ողորմութեանդ :

Դպ. Ձայն :

Զի ողորմած և մարդասէր
ես Աստուած գոլով. և քեզ վայել" :

Յետ այսորիկ՝ երկրպագեսցէ սեղա-
նոյն Քահանայն, և եկեալ նստցի յաս
տիճանն :

Եւ սկսանիցին դպիրքն սաղմն ըստ խոր-
հրդոյ աւուրն. և ընթերցցին զգիրս
մարգարէականս և առաքելականս :
Եւ զկնի ալէլուիայ, ըստ ցուցանելոյ
ընթերցուածոյն :

Եւ յաւարտմանն, Սարկաւագն ձայ-
նեսցէ :

Օրթի :

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ
'ի վերայ ժողովրդեանն, ասելով :

Խաղաղութի ամենեցուն :

Դպիրքն :

Եւ ընդ հոգւոյդ քում :

Սարկաւագն :

Երկիւղածութբ լուարուք :

Սարկաւագն :

Սրբոյ Աւետարանիս՝ որ ըստ
Մատթէոսի :

Դպիրքն :

Փառք քեզ Տէր Աստուած մեր :

Սարկաւագն :

Պրօսխումէ :

Դպիրքն :

Ասէ Աստուած :

Եւ Սարկաւագն ընթերցցի զԱւե-
տարանն սուրբ : Եւ յաւարտմանն
ասասցեն Ամենեքեան :

Փառք քեզ Տէր Աստուած մեր :

Եւ ապա ասասցեն զՆիկիական Դա-
ւանութիւն 'ի լման :

ՀԱՒԱՏԱՄՔ
'ի մի Աստուած Հայր ա-
մենակալ, արա-
րիչն երկնի և երկրի, երևե-
լեաց և աներևութից :
Եւ 'ի մի Տէր Յս. Քս. յՈրդին Այ,
ծնեալն յԱյ հօրէ միածին.
այսինքն՝ յէութենէ հօր :
Այ յԱյ՝ լոյս 'ի լուսոյ՝ Ած
ճշմարիտ. յԱստուծոյ ճշմար-
տէ ծնունդ՝ և ոչ արարած :

Ճե Նոյն

Նոյն ինքն ՚ի բնութենէ հօր՝ որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ՚ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք։ Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով։ Որով էառ մարմին՝ հոգի եւ միտք, եւ զամենայն որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն եւ փառօք հօր, ՚ի դատել զկենդանիս եւ զմեռեալս։ Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք եւ ՚ի սուրբ հոգին յանեղն եւ ՚ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս եւ ՚ի մարգարէս եւ յաւետարանս։ Որ էջն ՚ի յորդանան՝ քարոզեաց զառաքեալսն, եւ բնակեցաւ ՚ի սուրբսն։

Հաւատամք եւ ՚ի մի միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի։ ՚Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն եւ ՚ի թողութիւն մեղաց։ ՚Ի յարութիւն մեռելոց. ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց։ Յարքայութիւն երկնից, եւ ՚ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդին. կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ հոգին. կամ թէ յոչնչէ եղեն. կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ, եւ կամ զսուրբ հոգին. եւ թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ, եւ առաքելական սուրբ եկեղեցի։

Ամէն Լուսաւորչին ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս. երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յա"։

Սարկաւագն քարոզեսցէ ձայնիւ։

Եւ եւս խաղաղութեան զՏր աղա"։

Դպիրքն։

Տէր ողորմեա։

Սարկ֊գն։

Եւ եւս հաւատով աղաչես"։

Մինչ նոքա երգիցեն, Քահանայն ասասցէ զաղօթս ի ծածուկ։

Տէր մեր եւ փրկիչ յս քս՝ որ մեծդ ես ողորմութբ, եւ առատ պարգեւօք բարերարութեքդ։ Որ դու քոյին կամաւ ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի եւ մահու՝ յաղագս մեղաց մերոց։ Եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս հոգւոյդ սրբոյ՝ երանելի առաքելոցն։ Հաղորդս արա եւ զմեզ տէր՝ աղաչեմք զքեզ՝ ածային պարգեւացդ, թողութե մեղաց՝ եւ ընդունելութե հոգւոյդ սբյ։

Ի ձայն։

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութբ փառաւորել զքեզ ընդ հօր եւ ընդ սբ հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւէ"։

Խաղաղութե ամենեցուն։

Խաղաղութբ քով քս փրկիչ մեր՝ որ ի վեր ես քան զամ միտս եւ զբանս, ամրացո զմեզ եւ աներկիւղ պահեա յամ չարէ։ Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո՝ որք հոգւով եւ ճշմարտութբ քեզ երկիր պագանեն։ Վն զի ամենասբ երրորդութեդ վայելէ փառք"։

Օրհնեալ տր մեր յս քս։

Ամէն։

Սարկաւագն։

Օրհնեա՛ տէր։

Քահանայն խաչակնքեսցէ ի վր ժողովրդեանն. ասելով ի ձայն։

Տր ած օրհնեսցէ զամենե"։

Յետ այսորիկ՝ Պատրգամատոյցն եթէ եպիսկոպս իցէ, ի բաց հանցէ զեմիփորոնն։

Սրկ. Սաղմոս ասացէք տն այ։

Դպիրքն ասասցեն զՍրբասացութիւն ըստ խորհրդոյ աւուրն։

Սրկ. Ա՛ռ դք յերախայից։

Դպ. Սարմին տրունական։

Եւ գնասցեն խնկարկելով առ սբ խորհուրդն։

Սրկ. Յարեւու եհար զխո"։

Դպ. Եւ ցնծայնա ոգի հրս"։

Եւ ապա եղանակեսցեն։

Որք զքրովբէիցն։



ՀՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ

Ապա ՚ի Սարկաւագացն վերաբերելոյ սրբազան Հացն՝ և անմահութեան բաժակն ՚ի մէջ սեղանն։ Եւ մինչ նք երգիցեն՝ Քահանայն խոնարհեալ առաջի սբյ սեղանոյն, և խորհրդաբար աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Ոչ ոք արժանի է յըմբռնելոց մարմնաւոր ախտիւք և ցանկութբ՝ մատչել ՚ի սեղան քո, կամ սպասաւորել արքունական փառաց քոց․ քանզի սպասել զքեզ մեծ և ահաւոր՝ երկնաւոր զօրութեցն իսկ է։ Սակայն վասն անչափ բարերարութե քոյ՝ անպարագրելի բանդ հօր, եղեր մարդ՝ և քահանայապետ մեր երևեցար։ Եւ իբր տր ամենեցուն՝ այսմ սպասաւորութե և անարիւն զենման՝ զքահանայութի աւանդեցեր մեզ։ Զի դու ես տր ած մեր՝ որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց։ Որ ՚ի վր քերովբէական աթոռոյ բազմիս․ սերովբէից տր՝ և թագաւոր իսրայէլի։ Որ միայն սբ ես և ՚ի սբս հանգուցեալ։ Աղաչեմ զքեզ միայն բարերար և հեշտալուր․ նայեաց յիս ՚ի մեղուցել և յանպիտան ծառայս քո․ և սրբեա զհոգի և զմիտս իմ յամ պղծութե չարին։ Եւ բաւականացո զիս զօրութեամբ սբ հոգւոյդ՝ որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս՝ և քահանայագործել զքո անարատ մարմինդ և զպատուական արիւնդ։ Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ, մաղթեմ․ մի դարձուցաներ զերեսս քո յինէն․ և մի մերժեր զիս ՚ի ծառայից քոց։ Այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն ՚ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ։ Զի դու ես որ մատուցանես՝ և մատչիս՝ և ընդունիս՝ և տաս, Քս ած մեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկզբն քո հարբդ՝ և ամենասուրբ և բարերար հոգւովդ․ այժմ և միշտ և յաւէ՟։

Ապա ընծայքն վերաբերեսցին 'ի սեղանն: Ապա Քահանայն խնկարկեսցէ 'ի մէջ սեղանոյն: Ապա լուասցէ զձեռսն, ասելով:

Լուացից սրբութեամբ զձեռս": Սարկաւագքն:

Ապա եւ խաղաղութեան զոր ա":

Ապա եւ հաւատամ եւ այլ":

Մինչ նոքա քարոզիցեն, Քահանայն բազկատարած աղօթեսցէ 'ի ծածուկ:

ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ զօրութեանց՝ եւ արարիչ ամենայն լինելութեանց. որ յանէութենէ զէակս 'ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր: Որ եւ զմերս զհողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս, այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Դու Տէր՝ որում մատուցանեմք զպատարագս, ընկա՛լ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս, եւ կատարեա՛ զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ եւ արեան միածնի քո: Տուր թողութեան մեղաց պարգեւեա՛ ճաշակողացս զհացս զայս եւ զբաժակս:

'Ի Ձայն:

Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին յիսուսի քրիստոսի: ընդ որում քեզ Հօր՝ միանգամայն եւ Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ իշխանութիւն":

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ. երկրպագեա":

Դպ. Առաջի քո Տէր:

Սրկ. Ողջոյն տուք միմեանց":

Դպ. Քրիստոս 'ի մէջ մեր յայտնեցաւ":

Ապա համբուրեսցեն զսեղանն, եւ զմիմեանս: եւ Սարկաւագն ձայնեսցէ:

Ահի՛ կացցուք. երկիւղի՛":

Դպ. Առ քեզ Աստուած:

Սրկ. Պատարագ քրիստոսի մատչի":

Դպ. Ողորմութիւն եւ խաղաղ":

Քահանայն դարձցի եւ խաչակնքեսցէ եւ ասասցէ 'Ի Ձայն:

Շնորհք, սէր, եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Դպ. Ամէն. Եւ ընդ հոգւոյդ":

Սրկ. Զդրունս՝ զդրունս:

Դպ. Ունիմք առ քեզ Տէր:

Սրկ. Եւ գոհացարո՛ւք զՏէրն:

Դպ. Արժան եւ իրաւ:

Մինչ նոքա երգիցեն, Քահանայն ձեռնամած աղօթեսցէ 'ի ծածուկ։

Արժան է աստուածապէս և իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկրպագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ։ Որ զքոյին անքննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զկրճիցն։ Որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի՝ սեպհականեաց ըզ հաւատացեալս 'ի քեզ։ Եւ՛ զննելի բնութեամբ ըստ 'ի կուսէն մնառութե՝ հաճեցաւ բնակել 'ի մեզ։ Եւ՛ նորագործ ածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար։ Ած զի որում ո՛չ հանդուրժէին առաջի կալ զո՛արթնոցըն ջոկք՝ զարհուրեալք 'ի փայլակնացայտ և յանմատոյց լուսոյ ածութեդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան՝ շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս։

Ի ձայն։

Եւ՛ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութիւն յօրինել նո՛ւագս. և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոյն և ասել։

Դպիրքն։

Սբ · սբ · սբ · տր զօրութեանց · լի են երկինք և երկիր փառօք քո · օրհնութի՛ն 'ի բարձ''։

Մինչ նք երգիցեն, Քահանայն բազկատարած ասասցէ 'ի ծածուկ։

Սբ՝ սբ ես ճշմարտապէս, և ամենասուրբ · և ո՞վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զքո 'ի մեզ զանբաւ բարեգործութեան զեղմունս։ Որ և անդէն իսկ 'ի նախնումն զանկեալն ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր · մարգարէիւք, օրինացն տուչութբ, քահնյութբ, և ստուերակերպ երնջոցն մատուցմամբ։ Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց

ի̅ մերոց

մերոյ խնդրեալ զգաստալնիւք ,
եւ տուր մեզ զորդիդ քո միածին , պարտական և պարտս · զենումն և օծեալ · գառն և երկնաւոր հաց · քահանայապետ և պատարագ ։ Ս̃ան զի ինքն է բաշխող · և նոյն ինքն բաշխի 'ի միջի մերում միշտ անծախապէս ։ Ս̃ զի եղեւ հաւատաւ և առանց ցնորից մարդ , և անշփոթ միութեամբ մարմնացեալ յածածնէն և 'ի սբ կուսէն մարիամայ · Ճանապարհորդեաց ը̃ս ա̃մ կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց ։ Եւ յաշխարհակեցոյցն և յաւիթն փրկութե̃ մերոյ եկեալ կամաւ 'ի խաչն ։ Առեալ զհացն 'ի սբ՝ յածային՝ յանմահ՝ յանարատ և յարարչագործ 'ի ձեռս իւր , օրհնեաց՝ գոհացաւ՝ եբեկ՝ և ետ իւրոց ընտրեալ՝ սուրբ և բազմեալ աշակերտացն ·

ասելով ։

( Դ Ձայն ։ )

Առէք՝ Կերէք , Այս է
Մ Ա Ր Մ Ի Ն  Ի Մ ,
որ վ̃ն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութ̃ի և 'ի թողութ̃ի մեղաց ։

Դ ծածուկ ։

Նոյնպէս և զբաժակն առեալ , օրհնեաց՝ գոհացաւ՝ էարբ՝ և ետ իւրոց ընտրեալ՝ սբ և բազմեալ աշ̃կերտացն · ասելով ։

( Դ Ձայն ։ )

Արբէք 'ի սմանէ ամէն · Այս է
Ա Ր Ի Ւ Ն  Ի Մ
Նորոյ ուխտի , որ յաղագս ձեր և բազմաց հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութ̃ի մեղաց ։

Դ ծածուկ ։

Եւ զայն միշտ իւր յիշատակ առնելով , պատուիրան աւանդեաց մեզ բարերար որդին քո միածին ։ Եւ իջեալ 'ի ստորին վայրս մահու , մարմնովն զոր 'ի մերմէս ընկալաւ յազգակցութէ · և զնիգս դժոխոցն աղարտեալ հզօրապէս · զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ ա̃ծ՝ զա̃ծ կենդանեաց և մեռելոց ։

Իա Եւ

Եւ առցէ զԸնծայսն 'ի ձեռն, և ասասցէ 'ի ծածուկ։

Եւ արդ մեք տր՝ ըստ այսմ հրամանատուութե յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ, Յիշեմք զսորա որ վասն մեր զփրկագործ Չարչարանսն։

Զկենսատու Խաչելութիւն։

Զերեքօրեայ Թաղումն։

Զերանելի Յարութիւնն։

Զաստուածայս Համբարձումն։

Զնստիլն ընդ աջմէ քո հայր։

Զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ Գալուստն, խոստովանիմք, և օրհնեմք։

Եւ զընծայսն առեալ ինչ բարձրացուցեալ՝ մատուսցէ առ հայր։

Եւ դիցէ 'ի վր սրբոյ սեղանոյն. ասելով 'ի Ձայն։

Եւ զքոյս 'ի քոյոց քեզ մատուցանեմք, ըստ ամի՝ և յաղագս ամենեցուն։

Դպ. Յամի օրհնեալ ես տր։

Մինչ նք երգիցեն՝ Քահանայն բազկատարած ասասցէ 'ի ծածուկ։

Զքեզ արդարև տէր ած մեր գովեմք. և զքեն գոհանամք հանապազ։ Որ զանց արարեր զմերով անարժանութիւս. այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր պաշտաւորս։ Ոչ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց՝ յորոց յոյժ թափուր եմք, և միշտ ունայն գտանիմք հանապազ. Այլ 'ի քո բազմադեղ ներողութեանց ապաւինեալ՝ համարձակիմք մերձենալ 'ի սպասաւորութի մարմնոյ և արեան միածնի քոյ տն մերոյ և փրկչին յի քի. որում վայելէ փառք՝ իշխանու"։

'ի Ձայն։

Խաղաղութի ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկրպագ"։

Դպ. Առաջի քոյ տէր։

Մինչ նք երգիցեն՝ Քահանայն խոնարհեալ երկիր պագցէ սեղանոյն և ասասցէ։

Երկիր պագանեմք՝ և աղաչեմք՝ և խնդրեմք 'ի քէն բարերար ած։ Ուղարկեա' 'ի մեզ և յառաջի եդեալ ընծայս յայս՝ զմշտնջենաւորակից քո և զէակից սուրբ զհոգին։

Դպ. Որդի այ՝ որ պատա"։

Իւ Եւ

Եւ կայեալ Սարկաւագն առ ընթեր քահանային երկիւղիւ և դողութբ մեծաւ ասասցէ ի ցած, Տէր. Օրհնեա՛ տէր։
Եւ Քահանայն խաչակնքեսցէ զընծայսն․ ասելով ի ծածուկ։

ՈՐՈՎ․ ԶՀԱՑՍ օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես տն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես տն մերոյ և փրկչին յի քի։

Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես տն մերոյ և փրկչին յի քի։

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես տն մերոյ և փրկչին յի քի։

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես տն մերոյ և փրկչին յի քի։

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես տն մերոյ և փրկչին յի քի։

Որով զհացս և զգինիս օրհնեալ մարմին և արիւն ճշմարտապէս արասցես տն մերոյ և փրկչին յի քի․ փոխարկելով հոգւովդ քով սրբով։

Երեքս կրկնեսցէ։

Ապա ասասցէ ի Ձայն։

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս, յանդատապարտութի, ի քաւութի և ի թողութի մեղաց։

Եւ Քահանայն այսուհետև ոչ բարձրագոյն քան զընծայսն զձեռն իւր տարածեալ, այլ խոնարհագոյն․ և զաջոյն ի նոյն յառեալ՝ աղօթեսցէ ի ծածուկ։

Սովաւ շնորհեա՛ զսէր՝ ըզ հաստատութի և զըղձալի զխաղաղութի ամ աշխարհի․ սբյ Եկեղեցւոյ․ և ամ ուղղափառ Եպիսկոպոսաց․ Քահանայից․ Սարկաւագաց․ Թագաւորաց․ Աշխարհի․ Իշխանաց․ Ժողովրդոց․ Ճանապարհորդելոց․ Նաւելոց․ Կապելոց․ Վտանգելոց․ Աշխատելոց․ և Որք ի պատերազմինս բարբարոսաց։ Սովաւ և Օդոց շնորհեա՛ զբարեխառնութիւն․ և



Ամլոց զպտղաբերութիւն ։
և Ախտացելոց ՚ի պէս պէս ցաւս՝ փութապէս զառող-
ջութի ։
Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ՚ի քս ննջեցելոն ։
Զնախահարս ․
Զհայրապետս ․
Զմարգարէս ․
Զառաքեալս ․
Զվկայեալս ․
Զեպիսկոպոսունս ․
Զերիցունս ․
Զսարկաւագունս ․ և
Զբնաւ ուխտ եկեղեցւոյ քոյ սբյ ։ Եւ զամենեսեան յաշխարհական կարգէ զարս և զկանայս՝ հաւատով վախ-
ճանեալս ։

Դ․ Ձայն ։

Ընդ որս և մեզ ա՛յց արասցես բա՛րերար ած , աղաչեմք ։

Դպիրքն ։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛ ։

Քահանայն ։

Ածածնին սբյ կուսին Մարիա-
մու ․ և Յովհաննու մկրտչին ․ Ստեփաննոսի նախավկային ,



և ամ Սրբոց եղիցի յիշատակ ՚ի սբ պատարագս , աղաչեմք ։

Դպիրքն ։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛ ։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն Զենուամած ասասցէ ։

Առաքելոց սբց , մարգարէ՛ ։

Եւ մինչ նք երգիցեն զքարոզս, Քահանայն ասասցէ զԱղօթս ․ զի ՚ի միասին աւարտեսցեն ։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զսբ կաթուղիկէ և զառաքելական եկեղեցի քո , զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ ․ և ազա-
տեցեր խաչիւն սրբով ։ Շնոր-
հեա՛ սմա զանշրժ զխաղաղուի ։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զամ ուղղափառ ե-
պիսկոպոսունս՝ որք ուղիղ վարդապետութբ համառօտեն ՚ի մեզ զբանն ճշմարտութե ։

Դ․ Ձայն ։

Եւս առաւել զեպիսկոպոսա-
պետն մեր , և զպատուական հայրապետն ամ հայոց՝ զտէր (այս անուն) Կթուղիկն շնորհես-
ցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութբ ։

Եւ դարձեալ Սարկաւագն դայցէ 'ի ձախակողմն սեղանոյն. և քարոզեսցէ բարձր:

Գոհութի և փառաբանութի:

Մինչ նոքա քարոզեսցեն, Քահանայն ասասցէ զԱղօթս 'ի ծածուկ:

Յիշեա́ տէր և ողորմեա́, և օրհնեա́ զքո առաջի կացեալ ժողովուրդս՝ և զպատարագիս մատուցօղս: Եւ պարգևեա́ նց զպիտոյսն և զօգտակարսն: Յիշեա́ տէր և ողորմեա́, և օրհնեա́ զուխտաւորս և զընծայաբերողս եկեղեցւոյ քում սբյ. և որք յիշեն զաղքատս ողորմածութբ: Եւ հատո́ նց զվարձս նց ը ընդաբոյս առատութե քում հարիւրապատիկ աստ և 'ի հանդերձելումն: Յիշեա́ տր և ողորմեա́, և գըթա́ 'ի հոգիս հանգուցելոցն: Հանգո́ զնս և լուսաւորեա՝ և դասաւորեա́ ընդ սբս քո յարքայութեանդ երկնից. և արժանի́ արա ողորմութե քում: Յիշեա́ տր և զհոգի ծառային քո, (այս անուն.) և ողորմեա́ նմա ըստ մեծի ողորմութեան քում, և հանգո́ այցելութբ 'ի լոյս երեսաց քոց:

Եւ թէ կենդանի է: փրկեա́ զնա յամ որոգայթից հոգւոյ և մարմնոյ:

Յիշեա́ տէր և զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս, զկենդանիս և զըն-հանգուցեալս: Առաւախարեա́ զկամս հայցմանց նց և զմերս, ընդ ուղղորդն և որ լին է փրկութբ: Եւ վարձատրեա́ բոլորեցունց զանանց և զերանելի բարութիւնդ: Եւ զտեալ զխորհուրդս մեր՝ տաճարացո́ յընդունակութի մարմնոյ և արեան միածնի քո տն մերոյ և փրկչին յի քի: Ընդ որում քեզ հօր ամենակալի՝ հանդերձ կենդանարար և ազատիչ սբ հոգւովդ, վայելէ փառք՝ իշխանութի և պա՛՛:

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ 'ի Ժողովն:

Եւ եղիցի́ ողորմութի մեծին այ և փրկչին մերոյ յի քի, ը ձեզ ընդ ամենեսեանդ:

Դպ. Ամէն: Եւ ը հոգւույդ:

Սարկաւագն։

Եւ եւս խաղաղութեան զՏր աղ.":

Զամենայն սրբովք զորս յիշատակեցաք՝ եւ առաւելադս":

Վն մատուցեալ սբ եւ ածային պատարագիս որ":

Մինչ սարկաւագն քարոզեսցէ, Քահանայն ասասցէ ի ծածուկ։

Ճշմարտութիւն եւ Հայր ողորմութեան՝ գոհանամք զքէն։ Որ ի վեր քան զերանելի նահապետսն, զմեր պարտաւորեալս առաւել մեծարեցեր զգնութի։ Վասն զի նոցա Ած կոչեցար․ իսկ մեզ Հայր հաճեցար անուանիլ գթալով։ Եւ այժմ Տր՝ աղաչեմք զքեզ, զայսպիսի առ ի քէն զնորոգ եւ զպատուական անուանադրութեանս շնորհ, օրըստօրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ ի մէջ եկեղեցւոյ քում սբյ։

Ի Ձայն։

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ երկնաւոր Հայր՝ երգել եւ ասել։

Եւ Դպիրքն բազկատարած եղանակեսցեն։

Հայր մեր որ յերկինս ես, որ":

Մինչ նոքա երգեսցեն, Քահանայն աղօթեսցէ ի ծածուկ։

Տէր տերանց՝ Ած աստուածոց․ Թագաւոր յաւիտենականն․ արարիչ ամ արարածոց, Հայր Տն մերոյ ՅԻ ՔԻ։ Մի տանիր զմեզ ի փորձութի, այլ փրկեա՛ ի չարէ՝ եւ ապրեցո՛ ի փորձութենէ։

Ի Ձայն։

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս․ ամէն։

Խաղաղութի ամենեցուն։

Դպիրքն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկ՝գն։

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպիրքն։

Առաջի քո Տէր։

Սարկաւագն։

Օրհնեա՛ Տէր։

Քահանայն խոնարհեսցի․ եւ ամ ժողովուրդն շոքեսցի ի ծունկս։

Եւ Քահանայն աղօթեսցէ ի ծածուկ։

Որ աղբիւրդ ես կենաց՝ եւ բղխումն ողորմութեան, Հոգիդ Սբ․ ողորմեա՛ ժողո-

վրդեանս, որք խոնարհեալ երկիրպագանեն ածութեան քում: Պահեա՛ զսոսա ամբողջս: Տպաւորեա՛ յոգւոց սոցա զձեւ մարմնոյ ցուցակի, առ 'ի ժառանգութի̅ և 'ի վիճակ հանդերձելոցդ բարեաց:

Դ Ձայն:

Քրիստոսի՛ Յիսուսի՛ Տերամբ մերով: ընդ որում քեզ հոգւոյդ սբյ, և հօր ամենակալի վայելէ փառք՝ իշխանութի̅ և պատիւ. այժմ և":

Եւ Քահնյն առցէ զսր. հաղն 'ի ձեռն:
Եւ Սարկաւագն ձայնեսցէ բարձր:

Պռօսխումէ:

Եւ Քահանայն բարձրացուսցէ անհե-րև ամենայն ժողովրդեանն:
Եւ ասասցէ 'ի Ձայն:

Ի Սրբութիւն Սրբոց:

Դպիրքն բարձր Ձայնիւ:

Միայն Սբ̃, միայն Տր̃, Յս̃":

Քահանայն:

Օրհնեալ Հայր Սուրբ Ած̃ Ճշմարիտ:

Դպիրքն. Ամէն:

Քահանայն:

Օրհնեալ Որդին Սբ̃ Ած̃ Ճշմարիտ:

Դպիրքն. Ամէն:

Քահանայն:

Օրհնեալ Հոգին Սբ̃ Ած̃ Ճշմարիտ:

Դպիրքն. Ամէն:

Քահանայն:

Օրհնութի̅ և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ":

Դպիրքն:

Ամէն: Հայր Սբ̃. Որդին Սբ̃. Հոգին Սբ̃: Օրհնութի̅ Հօր և Որդւոյ և սբյ Հոգ":

Եւ մինչ նոքա երգիցեն զայս, Քահանայն խոնարհեալ, և աղօթեսցէ 'ի ծածուկ:

Նայեաց Տէր մեր յս̃ քս̃ յերկնից 'ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութե̅ քո: Եկ 'ի սրբել և 'ի կեցուցանել զմեզ: Որ ընդ հօր նստիս՝ և աստ պատարագիս, արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ և 'ի պատուական արենէ. և 'ի ձեռն մեր՝ ամ̅ ժողովրդեանս:

Եւ զայս ասացեալ՝ երկրպագեսցէ և համբուրեսցէ զսեղանն:



Եւ

Եւ առեալ զսբ՟ Մարմինն ողջ թացցէ յանապական Արիւնն, և ասասցէ:

Տր՟ ած՟ մեր՝ որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քո քրիստոնեայս. և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւազանաւն ՚ի թողութիւն մեղաց. և արժանի արարեր զմեզ հաղորդել սբ՟ մարմնոյ և արեան միածնի քոյ: Եւ այժմ աղաչեմք զքեզ տր՝ արա՛ զմեզ արժանի ընդունել զսբ՟ խորհուրդս զայս մեզ ՚ի մեղաց թողութի՟: Եւ գոհութ՟ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և սբ՟ հոգւոյդ, այժմ և":

Եւ բարձրացուսցէ ակներև ժողովրդեանն, և ասասցէ ՚ի Ձայն:

Սբ՟ ՚ի սբ՟ պատուական Մարմնոյ և Արեանս տն՟ մերոյ և փրկչին յի՟ քի՟, ճաշակեսցուք սրբութբ՟, որ իջեալ ՚ի յերկնից բաշխի ՚ի միջի մերում: Սա՛ է կեանք, Յոյս, Յարութի՟, Քաւութի՟ և թողութի՟ մեղաց: Սաղմոս ասացէք տն՟ այ՟ մերում, սաղմ ասացէք երկնաւոր թագաւորիս մերում անմահի, որ նստի ՚ի կառս քերոբէական:

Սարկաւագն ձայնեսցէ:

Սաղմոս ասացէք տն՟ այ՟ մերոյ՝ դպիրք ձայնիւ քաղցր":

Եւ Դպիրքն երգանակեսցեն:

Քս՟ պատարագեալ բաշխի":

Մինչ նոքա երգիցեն, Քահանայն առցէ զսբ՟ Մարմինն ՚ի ձեռն, և համբուրեսցէ արտասուօք, ասելով:

Ո՛ր օրհնութի՟, կամ զո՛ր գոհութի՟ ՚ի վր՟ հացիս և բաժակիս ասասցուք: Բայց Յս՟՝ զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբ՟ և ամենասբ՟ Հոգւովդ, այժմ և միշտ":

Դարձեալ ասասցէ:

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես Քս՟ որդի Այ՟, որ բարձեր զմեղս աշխարհի:

Եւ բեկեալ արկցէ ՚ի բաժակն Արեան ասելով:

Լրումն Հոգւոյն Սրբոյ:

Եւ ապա առեալ զմի մասն ՚ի ձեռն, ասասցէ արտասուօք և գոհութեամբ առ Հայր և Որդի: ՚ի ծածուկ:

ՀՈԳԻ ՍՈՒՐԲ որ անուանեցեր ըզմեզ անուանակցութեամբ միածնի քո. և լուսաւորեցեր մկրտութեամբ հոգևոր աւազանին. արժանի՛ արա ընդունել զքո խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն: Տպաւորեա՛ 'ի մեզ զշնորհս Հոգւոյդ սրբոյ, որպէս 'ի սուրբ առաքեալսն՝ որք ճաշակեցին և եղեն մաքրիչք ամենայն աշխարհի: Եւ արդ՝ ով Հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մանաւորեա ճաշակման երեկոյին առաքելոցն, բառնալով ըզ խաւար մեղաց: Մի՛ հայիր յանարժանութիւնս իմ. և մի՛ արգելցես զշնորհս Հոգւոյդ սրբոյ. այլ ըստ անբաւ մարդասիրութեան քում՝ պարգևեա՛ զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց: Որ խոստացաւ և ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս Թէ՝ ամենայն որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, կեցցէ 'ի յաւիտեան:

Արդ՝ արա՛ զսա մեզ 'ի քաւութիւն, զի որք կերիցեն և արբցեն 'ի սմանէ, հասցեն զօրհնութիւն և զփառս Հօրդ՝ և Որդւոյդ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ՝ և յաւիտեանս":

Խաղաղութիւն ամենեցուն:

Գոհանամ զքէն Տէր Թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս հաղորդիլ սուրբ մարմնոյ և արեան քո: Եւ այժմ աղաչեմ զքեզ. մի՛ լիցի սա ինձ 'ի դատապարտութիւն, այլ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց. յառողջութիւն հոգւոյ և մարմնոյ. և 'ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան: Որպէս զի սրբեսցէ սա զշունչս իմ, և զհոգի և զմարմին իմ: և արասցէ զիս տաճար և բնակարան ամենասուրբ Երրորդութեանդ: Զի ընդ սրբոց քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ՝ և":

Սէր Յովհաննու Ոսկեբերանին տա-
ցեալ Աղօթք:

Գոհանամ և մեծացուցա-
նեմ և փառաւորեմ զքեզ տ՟ր
ա՟ծ իմ, զի զիս զանարժանս
արժանացուցեր յաւուր յայ-
միկ հաղորդակից լինել ա՟ծա-
յին և սոսկալի խորհրդոյ քում,
անարատ մարմնոյդ և պա-
տուական արեանդ: Ա՟յ այ-
տրիկ՝ զսոսա ՚ի բարեխօսու-թ՟ի
ունելով ապաշխարեմ, յա՟մ ա-
ւուրս և ՚ի ժամանակս կենաց
իմոց ընդ սրբութ՟ե քոյ պահեա
զիս: Ա՟ղ զի յիշելով զբար-
գըթութիւս քո, և կենդանի է-
ղէց ընդ քեզ. որ վ՟ս մեր չար-
չարեցար և մեռար և յարեար:
Ա՟ի մերձեցայ, տ՟ր իմ և ա՟ծ՝
խորտակիչն, կնքելով անձին
իմոյ պատուական արեամբդ
քով: Ամենակալող՝ մաքրեա՛
զիս սրբոց յա՟մ մեղաւորի դոր-
ծոց իմոց, որ միայնդ ես ան-
մեղ: Ամրացո՛ զկեանս իմ տ՟ր՝
յա՟մ փորձութենէ. և զպա-
տերազմողն իմ դարձո՛ յետեն
յետս՝ պատկառեալ և ամա-
չեցեալ, որչափ յաւնէ ՚ի վ՟ր
իմ: Ամրացո՛ զգնացս մտաց և
լեզուի իմոյ, և զա՟մ շանա-
պարհս մարմնոյ իմոյ: Լէր
հանապազորդ ընդ իս, ըստ
անսուտ խոստմանց քոց՝ թէ
որ ուտէ զմարմին իմ և ըմպէ
զարիւն իմ, նա յիս բնակեսցի,
և ես ՚ի նմա: Գո՛ւ ասացեր
մա՛րդասէր, կացո՛ զբանս
ա՟ծային անլուծանելի հրամա-
նաց քոց: Քանզի դու ես
ա՟ծ ողորմութ՟ե և գթութ՟ե և
մարդասիրութ՟ե, և պարգևիչ
ա՟մ բարեաց: Եւ քեզ վայելէ
փառք՝ հանդերձ հարբդ և ա-
մենասուրբ հոգւոյդ, այժմ և՛՛:

Եւ ապա տեառնագրեսցէ զինքն. և
խնդրեսցէ ՚ի Ճշմարտէն Աստուծոյ ըղ-
ձես ձես հայցուածս անձին իւրոյ, և
ժողովրդեան, և աշխարհի: Եւ թողու-
թիւն խնդրեսցէ իւրոց յանցաւորացն,
թշնամեացն և ատելեացն: Եւ ան-
դէն ահիւ և դողութեամբ ճաշա-
կեսցէ ՚ի մարմնոյն, և արբցէ ՚ի բա-
ժակէն. ասելով:

Մարմին քո անապական՝ լիցի
ինձ ՚ի կեանս. և ս՟րբ Արիւն քո
՚ի քաւութ՟ի և ՚ի թողութ՟ի մեղաց:

Ապա Սարկաւագն հաղորդեսցի. և յետ հաղորդելոյն դարձցի առ ժողովուրդն և ասասցէ բարձրաձայն։

Երկիւղիւ և հաւատով յառ"։

Ապա Դպիրքն բարձր ձայնիւ։

Ա՟ծ մեր և Տ՟ր մեր երևեցաւ։

Ապա հաղորդեսցի նոր ձեռնադրեալն. բայց ո՛չ ՚ի բերանն, այլ յափն տալով զսրբութիւն։ և ամենայն արժանաւորքն հաղորդեսցին։ Ապա յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն ընծայիւն, և ասասցէ։

Կեցո՛ Տ՟ր զժողովուրդս քո՝ և օրհնեա՛ զժառանգութիւն քո. հովուեա՛ և բարձրացո՛ զսոսա յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Ապա Դպիրքն երգեսցեն։

Լցաք ՚ի բարութ՟եց քոց Տ՟ր։

Քահանայն ասասցէ ՚ի ծածուկ։

Գոհանամք զքէն Հայր ամենակալ՝ որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ ս՟բ զեկեղեցի տաճար սրբութեան, ուր փառաւորի ս՟բ Երրորդութիւն։

Ալէլուիա։

Գոհանամք զքէն Ք՟ս Թագաւոր՝ որ պարգևեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով և արեամբ քով սրբով։ Շնորհեա՛ զքաւութիւն և զմեծ զողորմութիւն։ Ալէլուիա։

Գոհանամք զքէն Հոգիդ ճշմարիտ՝ որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի։ Անարատ պահեա հաւատով Երրորդութեանդ յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Ալէլուիա։

Սրկ. Եւս խաղաղութեան զՏ՟ր"։

Եւս հաւատով ընկալեալք"։

Դպ. Գոհանամք զքէն Տ՟ր"։

Քահանայն ասասցէ ՚ի ծածուկ։

Գոհանամք զքէն Ք՟ս Ա՟ծ մեր՝ որ զայսպիսի ճաշակումն բարութ՟ե շնորհեցեր մեզ ՚ի սրբութ՟ե կենդանութ՟ե։ Սովիմբ պահեա՛ զմեզ սուրբ և անարատ, բնակեալ զմեօք քո աստուածային խնամօքդ։ Հովուեա՛ զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց և բարեսիրաց։ Որով ամրացեալք յամ՟ բանսարկուին ընդդիմութ՟եց, քում հեթ արժանի եղիցուք լսել ձայնի. և քեզ միայնոյ քաջայաղթ և ճշմարիտ հովուիդ հետևել։ Եւ առ ՚ի քէն յօրինել զպատրաստեալ տեղի յարքայութ՟եդ երկնից.

Լու Ա՟ծ

Յս մեր և տր մեր և փրկիչ մր
քս։ Որ ես օրհնեալ ընդ հօր և
ընդ սբ հոգւոյդ, այժմ և՛՛։

Խաղաղութի ամենեցուն։

Անքննին, անհաս, երրեակ
ինքնութեդ. հաստիչ, ընդու-
նօղ, և անբաժանելի, միա-
նական սբ երրորդութեդ,
վայելէ փառք՝ իշխանութի և
պատիւ. այժմ և միշտ՝ և՛՛։

Եւ ապա առցէ զԱետարանն սբ ՚ի ձեռն իւր։ Եւ երիցս երկրպագեալ համբուրեսցէ զսբ սեղանն։ Եւ իջանելով ՚ի մէջ եկեղեցւոյն, ասասցէ զԱղօթս ՚ի Ձայն։

Որ օրհնես զայնոսիկ՝ որք
օրհնեն զքեզ տր, և սբ առ-
նես զյուսացեալս ՚ի քեզ. կե-
ցո՛ զժողովուրդս քո՝ և օրհ-
նեա՛ զժառանգութիս քո։
Զլրումն եկեղեցւոյ քոյ պա-
հեա՛։ Սրբեա՛ զնոսա՝ որք
ողջունեցին սիրով զվայելչու-
թի տան քոյ։ Դու զմեզ փառա-
ւորեա՛ ածային զօրութբ քով.
և մի՛ թողուր զյուսացեալս ՚ի
քեզ։ Զխաղաղութի պար-
գևեա՛ ամ աշխարհի. եկե-
ղեցեաց, քահանայից, թա-
գաւորաց քրիստոնէից, և
զինուորեալ մանկանց նց. և
ամ ժողովրդեանս։ Զի ամ
տուրք բարիք՝ և ամ պար-
գևք կատարեալք, ՚ի վերուստ
են իջեալք առ ՚ի քէն. որ ես
հայր լուսոյ։ Եւ քեզ վայելէ
փառք՝ իշխանու՛՛։

Եւ Դպիրքն ասասցեն երիցս։

Եղիցի անուն տն օրհնեալ՛՛։

Եւ Քհնյն դարձցի առ ժողովուրդն։ Եւ ասասցէ ՚ի Ձայն։

Կատարումն օրինաց և մար-
գարէից դու ես քս ած փր-
կիչ մեր. որ լցեր զամենայն
հայրական տնօրէնութիս քո.
լի՛ց և զմեզ հոգւովդ քով
սրբով։

Ապա Սարկաւագն ձայնեսցէ։

Օրթի։

Քահանայն։

Խաղաղութի ամենեցուն։

Դպիրքն։

Եւ ը հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Երկիրպագութը լերուք։

Սուրբ Աւետարանն որ ըստ Յովհաննու ։
(Գլուխ Առաջին . Համար ա ։)

Ի ՍԿԶԲԱՆԷ էր բանն . և բանն էր առ Աստուած . և Աստուած էր բանն ։ Նա էր ի սկզբանէ առ Աստուած ։ Ամենայն ինչ նովաւ եղև . և առանց նորա եղև և ոչ ինչ՝ որ ինչ եղեն ։ Նովաւ կեանք էր . և կեանքն էր լոյս մարդկան ։ Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ . և խաւար նմա ոչ եղև հասու ։ Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ՝ անուն նմա յովհաննէս ։ Սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն . զի ամենեքին հաւատասցեն նովաւ ։ Ոչ էր նա լոյսն . այլ զի վկայեսցէ վասն լուսոյն ։ Էր լոյսն ճշմարիտ . որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ ։ Յաշխարհի էր . և աշխարհ նովաւ եղև . և աշխարհ զնա ոչ ծանեաւ ։ Յիւրսն եկն՝ և իւրքն զնա ոչ ընկալան ։

Իսկ որք ընկալան զնա , ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել . որոց հաւատասցեն յանուն նորա . Որք ոչ յարենէ , և ոչ ՚ի կամաց մարմնոյ՝ և ոչ ՚ի կամաց առն . այլ յԱստուծոյ ծնան ։ Եւ Բանն Մարմին եղև՝ և բնակեաց ՚ի մեզ ։ Եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զՄիածնի առ ՚ի Հօրէ , լի շնորհօք և ճշմարտութեամբ ։ Յովհաննէս վկայեաց վասն նորա . աղաղակեաց և ասէ . սա է՝ զորմէ ասէի , որ զկնի իմ գալոց էր՝ առաջի իմ եղև . զի նախ քան զիս էր ։ Զի ՚ի լրութենէ նորա մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց ։ Զի օրէնքն ՚ի ձեռն Մովսիսի տուան . շնորհք և ճշմարտութիւն ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն ։

Սարկաւագն ։

Սբ խաչիւս աղաչեսցուք զՏր ։

Քահանայն ։

Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր ։

Սարկաւագն ։

Օրհնեսցուք զՏր յամ ժամ ։

Եւ Քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր։

Օրհնեա՛լք եղերուք ՚ի շնորհաց Սբ Հոգւոյն. երթա՛յք խաղաղութբ. և Տր եղիցի՛ ընդ ամենեսեանդ։

Եւ Դպիրքն ասասցեն։

՚Ի Տր պարծեսցի անձն իմ"։

Եւ ընդ սաղմոսելն դպրաց՝ բաշխեսցի Նշխար։ Եւ յաւարտմանն Քահանայն դարձցի յարևելս՝ և երկրպագեսցէ առաջի սրբոյ սեղանոյն երիցս՝ և ասասցէ։

Տէր Յիսուս Քրիստոս Ած ողորմեա՛ ինձ։

Եւ մտեալ յաւանդատունն մերկասցի ՚ի զգեստուցն։ Եւ երթիցէ խաղաղութեամբ։



Յիշատակարան։

Փառք և գոհութի ամենազօրն յաւիտենից Միաստուածեան Երրորդութեանն և Անբաժանելի Միութեն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ՝ հաստողին հանուրց, և կատարելագործողին ամ̃ իրաց և իրակութ̃ց բարեաց։ Որոյ համատարած շնորհացն օժանդակութբ եառ զկատարումն նորոգ տպագրութս սբ խորհրդատետրս, ՚ի ձեռն տեառն սրբանուէր Քահանայից ՚ի սրբազնագործութե Աստուածայնոյ խորհրդոյն։ ՚Ի թուականիս մերում ռմլէ, և ՚ի սեպտեմբերի վերջն. ՚ի յերկնահանգէտ Աթոռս Սուրբ ԷՋՄԻԱԾԻՆ. ՚Ի Հայրապետութեան Տն Ղուկասու Սբ̃ Կաթուղիկոսի ամ̃ Հայոց։ Եւ ՚ի պատրիարգութե սբյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ, Տն Յովակիմայ, և Տն Զաքարիայ Արքեպիսկոպոսացն։

Իէ Արդ՝

Արդ՝ խնդրեմ 'ի սրբազնագործ դասուցդ Քահանայական, որք վայելէք զվայելչատիպ մր Պատարագամատոյցս, յիշել 'ի Քս, զհաստատողն Տպարանիս՝ զհոգելոյս Տր Միքօն բազմաշխատ և սրբազան Կաթուղիկոսն ։

Եւ զռոճօղն ծախուց հաստատեցման Գործարանիս՝ ըզ ջուղայեցի խօջաջանեան լուսահոգի Գրիգոր աղային, և զծնօղսն իւր, և զամ ազգայինսն, և զքոյրն Նորա զբարեպաշտուհի Օլխտույն ։

Մանաւանդ՝ յիշեսջիք զջուղայու Նորևանցի և 'ի Սուրաթ քաղաքի բնակեալ Քանէր և մեծահաւատ Պարոն Աէտիխն, և զհանգուցեալ հայրն իւր զՄէթ աղային . և զՄայրն բարեպաշտուհի . Նաև զկենակիցն իւր զԹաղուրուն, և զդուստրն Մարիամ, և ըզ փաղաթառամ Զաւէլունն . և զայլ ամենայն մերձաւոր և հեռաւոր Ազգականն Նորին՝ զկենդանիսն և զննջեցեալսն ։ Մ͞ն զինոյն բարեմիտ Պարոն Աէտիքի խնդրանօքն և արդեամբքն տպագրեցաւ մր Մատթէոս՝ 'ի բարի յիշատակ նմա և Նորայնոցն ։ Որոց ամենեցուն ողորմեսցի Քս ͞ը մեծի ողորմութեն իւրում, քահեսցէ զյանցանս նոցա, և արժանացուսցէ զնոսա մտից արքայութեն ընդ կամարարս և ընդ սիրելիս իւր ։

Այլև յիշեսջիք զքանդակօղն Նոր գրոցս և ամ պարագայիցն՝ զվարպետ Յարութիւնն, և զտիրացու Խաչատուրն . և զեղբայր Սաղաքիայն, և ըզ Աղէքսանդր Մարկաւագն . և զայլ աշխատաւորս Գործարանիս ։ Եւ զյիշօղսդ յիշեսցէ Տր ողորմութբ իւրով.

Ամէն ։

Վ. Ւ. Ր. Գ.

Է